


2931

264

U-85

1919



„ԲԱՐԻ ԼՈՒՐԻ“ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

№ 22.

Կ Ի Ր Ա Կ Ի Ն

— Թ Ի —

Հ Ա Ր Ա Թ Ը

ВОСКРЕСЕНЬЕ ИЛИ СУББОТА.

Է. ՄՈԴԵՐՉՈՆ:

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.



ԲԱԿՍ

Типография А. Н. Тараера и И. О. Степанянца
1914.



2001

264

Մ. 85



Կ Ի Ր Ա Կ Ի Ն Թ Է Շ Ա Բ Ա Թ Ը:

Արդ թող մէկը չդատէ ձեզ ուտելու կամ խմելու համար, կամ տօնի կամ ամսագլխի կամ շաբաթների մասին: Որոնք նոր գալու բաների ստուերներն են, բայց մարմինը Քրիստոսին է: Կող. Բ, 16, 17:


Կիրակին թէ շաբաթը: Այս հարցը Աստուծոյ շատ որդիներին զբաղեցրել է: Ո՞րն է ուղիղը, ո՞րն է Աստուծոյ կամեցածը: Ս. Գրքի համեմատ է կիրակին տօնելը, թէ պէտք է շաբաթը տօնել: Շաբաթապահների շնորհիւ այս հարցը մնում է ասպարէզի վրա: Մանաւանդ վերջին ժամանակը նրանք մեծ եռանդով աշխատում են ամեն տեղ տարածել իրանց գաղափարը և շատերին անհանգիստ են անում ասելով. եթէ մէկը կամենում է Ս. Գրքին հնազանդել նա պէտք է շաբաթը պահէ: Շատ հմուտ կերպով Ս.

Գրքի զանազան համարներ իրար ետեից առաջ բերելով՝ նրանք անհանգիստ են անում շատ քրիստոնեաների և մինչև անգամ աշողում են ոմանք շաբաթապահութեան սարսափելի մոլորութիւնների մէջ մտցնել:

Սրա համար էլ անհրաժեշտ պէտք է մօտից շօշափել այդ հարցը և սրան պատասխանել թէ Ս. Գրքի և թէ պատմական փաստերով:

Շաբաթապահները պնդում են թէ կիրակին տօնելով մարդիկ կոտորում են շաբաթի պատուէրը, թէ կիրակին տօնելը առաջ է եկել հեթանոսութիւնից կամ պապականութիւնից: Եւ այնպէս հաստատ պնդում են սրա վրա, որ շատ միամիտ անձինք սրանով երկիւղի մէջ են ընկնում և տատանվում:

44822-ա



29561-63

2010

Բայց սա շատ անհիմն է և սխալ: Ոչ մի հեթանոս ժողովուրդ գործ չունի կիրակին տօնելու հետ: Իսկ արդեօք Հռոմի պապն է փոխել պատուիրանները և շաբաթի տեղ կիրակին մտցրել: Երբեք ոչ. ինչքան էլ շաբաթապահները պնդեն, բայց սա բոլորովին սխալ է: Որովհետև մենք ունինք եկեղեցական հայրերի գրուածները, որոնց մէջ պարզ տեսնում ենք կիրակիի տօնելը պապականութիւնից շատ առաջ:

Ամենանշանաւոր վկան Տերտուղիանոսն է, որ ծնվել է 160 թ. Կարթագո քաղաքում, իբրև Հռոմայեցի մէկ գնդապետի որդին և դարձի է եկել 190-ին: Նա շատ գրուածներ ունի լատիներէն լեզուով, որոնց մէջ շատ անգամներ վկայում է թէ կիրակին տօնելը այն ժամանակի քրիստոնեաների մէջ ընդհանուր սովորութիւն էր:

Այստեղ թարգմանաբար առաջ կը բերենք այս գրուածներից մի քանի կարևոր կտորներ:

Իր Ապօղոգեաթիկոս կոչված գրվածքում նա պաշտպանում է քրիստոնէութիւնը հեթանոսների դէմ: Նա այնտեղ յիշում է թէ հեթանոսներից ոմանք կարծում են իբրև թէ արեգակն է քրիստոնեաների Աստուածը: Եւ նրանք ուրիշ պատճառների մէջ մէկն էլ համարում են կիրակիի տօնելը քրիստոնեաների կողմից: Սրա հակառակ ասում է Տերտուղի-

անոսը.

«Մենք կիրակին տօնում ենք բոլորովին ուրիշ պատճառով, ոչ թէ ի պատիւ արեգակի: Մեր տօնելը շատ տարբերվում է նրանցից, որոնք Սատուրնի օրը անց են կացնում պարապութիւնով և կեանքի զուարճութիւնով, մենք նոյնիսկ չենք հետևում հրէական սովորութեանը»:

Շատ որոշ են այս խօսքերը: Սրանք պարզ ցոյց են տալիս, որ քրիստոնէական կիրակին տօնելը ոչ մի կապ չունի հեթանոսական հեշտասիրական տօների հետ և միւս կողմից էլ սա հրէական շաբաթի պահելը չէ:

Առաջ բերենք երկու տեղեր էլ նրա մի գրուածքից «Հրէաների դէմ», որում նա պաշտպանում է քրիստոնէութիւնը հրէաների դէմ և որից պարզ տեսնում ենք որ այն ժամանակի քրիստոնեաները բոլորովին հեռու էին շաբաթը տօնելուց: Նա գրում է այն գրքի երկրորդ մասում հետևեալը.

«Աստուած գրել էր Ադամին առանց թլփատութեան և առանց շաբաթը տօնելու, Նա հաւանեց նոյնպէս Աբելին, որը զոհ բերաւ Նրան առանց թլփատութեան և առանց շաբաթը տօնելու: Սրտի միամտութիւնով բերած նրա զոհին նայեց Աստուած գթութեամբ, իսկ մերժեց նրա եղբայր Կայէնի զոհը, որը իր զոհաբերութիւնը ուղիղ կերպով չը սրբեց: Նոյն էլ

Աստուած ազատեց ջրհեղեղից առանց թլփատութեան և շաբաթը տօնելու: Եւ բոլորովին արդար ենովքին էլ Նա վեր առաւ այս աշխարհից առանց թլփատութեան և շաբաթը տօնելու: Նա մահը չը ճաշակեց և ցոյց տվաւ մեզ որ առանց Մովսէսական օրէնքի բեռը կրելու կարելի է հաճոյանալ Աստուծուն: Նոյնպէս էլ բարձրեալ Աստուծոյ քահանայ Մեղքի սեղէկը քահանայութեան ընտրվեց առանց թլփատութեան և առանց շաբաթը սրբելու»:

Յետոյ նա բացատրում է թէ հրէական՝ մարմնի թլփատութեան նշանակութիւնը միայն ժամանակաւոր էր մինչև որ կը գար Մովսէսից և մարգարէներից մարգարէացված հոգևոր և ճշմարիտ թլփատութիւնը (Երկր. Օրինաց Ժ, 16. Երեմ. Դ, 3. 4. Հռովմ. Բ, 28. 29): Եւ նոյնն էլ շաբաթին է վերաբերում: Իր գրքի չորրորդ մասում ասում է նա հետևեալը.

«Ինչպէս ապացուցվեց մարմնի թլփատութեան և հին օրէնքի վերացվելը, հիմա էլ ցոյց պիտի տրվի որ շաբաթի պահելն էլ ժամանակաւոր էր միայն... Մենք տեսնում ենք որ որևէ գերութեան ծառայութիւնից պէտք է հանգստանանք ոչ միայն հօթներորդ օրը, այլ և բոլոր ժամանակը: Որովհետև Ս. Գիրքը պարզ խօսում է յաւիտենական շաբա-

թից և ժամանակաւոր շաբաթից»:

Դարձեալ մի ուրիշ տեղ նա գրում է.

«Մենք տօնում ենք հօթներորդ օրի հետևեալ օրը, որով տարբերվում ենք հօթներորդ օրը տօնողներից»:

Այս խօսքերից պարզ և անհերքելի կերպով երևում է, որ Քրիստոսից արդէն մօտ 200 տարիի չափ յետոյ կիրակի տօնելը ընդհանուր է եղել քրիստոնեաների մէջ:

Բայց սրանից շատ առաջ էլ կիրակիի մասին վկայութիւններ ունենք:

140 թւին գրում է Յուստինոս նահատակը:

«Բայց կիրակին այն օրն է, որում մենք սովորաբար մեր ժողովներն ունինք, որովհետև Յիսուս մեր Փրկիչը այդ օրը մեռելներից յարութիւն է առել»:

Իգնատիոսը որը նահատակվել է 105 և 108 թւերի միջև Հռովմում նոյնպէս է խօսում ինչպէս և Տերտուղիանոսը.

«Մենք այլևս շաբաթը չենք տօնում, այլ ապրում ենք Տիրոջ կեանքով, որով նոյնպէս մեր կեանքը ծագել է»:

Եւ Բարնաբասը ասում է իր դեռ առաջին դարում գրած թղթում.

«Մենք ուրախութեամբ տօնում ենք ութերորդ օրը, որովհետև այդ օրը Քրիստոս յարութիւն է առել»:

եկեղեցական հայրերի այս խօսքերը բոլորովին համաձայն են Ս. Գրքի համարներին, օրինակ Գործք առ. Ի, 7. «Եւ միաշաբաթի օրը դեռ որ ժողովուած էինք հաց կտրելու համար, Պօղոսը նրանց խօսում էր»... Յունարէն խօսքի նշանակութիւնն է «ըստ սովորութեան ժողովուած էինք»։ Նշանակում է յարատուութիւն, սովորութիւն։

Ուրեմն տեսնում ենք որ կիրակին տօնելը հին եկեղեցական աւանդութիւն էր առաքեալների ժամանակից։ Կոնստանտին կայսրի կիրակիի օրէնքը նշանակում էր թէ կիրակին պետութեան կողմից ճանաչվեց և հաստատվեց իբրև օրէնք քրիստոնէութեան տարածմանը նպաստելու համար։ Օրէնքը տրվեցաւ 321-ին, որից շատ առաջ ըստ եկեղեցական հայրերի գրութեան արդէն կիրակին տօնելը ընդհանրապէս ընդունված էր։ Ուրեմն կիրակին տօնելու պատճառը ոչ Կոնստանտին կայսրն էր և ոչ էլ Հռոմի պապը։ Պապը յետոնները միայն ընդունեց կիրակին տօնելը և եկեղեցական օրէնք դարձրեց, մինչ դեռ սա արդէն առաքելոց օրերից կար։

Ուրեմն բոլորովին անհիմն է շաբաթականների պնդելը թէ կիրակին տօնելը ծագում է առել հեթանոսութիւնից կամ պապականութիւնից։ Հաստատ ապա-

ցուցվում է բոլորովին սրա հակառակը։

Բայց որ քրիստոնեաները սկզբից տօնել են կիրակին, միթէ իրաւունք ունէին այդ անելու։ Միթէ Աստուած պարզ ու որոշ չի նշանակել տօնելու շաբաթ օրը, եօթներորդ օրը։

Սրան ուղիղ պատասխան տալու համար պէտք է կարճաբօտ կերպով պարզենք մեր դիրքը դէպի օրէնքը, որովհետև շաբաթի պատուիրանը օրէնքի մի մասն է։

Այստեղ մարդիկը մի շատ վատ սխալ են գործում՝ բաժանելով Աստուծոյ Սինայից Մովսէսին տուած օրէնքը երեք մասի։ Տարբերում են 1. Բարոյական օրէնք՝ 10 պատուիրանները. 2. Ծիսական օրէնք—գոհաբերութիւնները և այլն. 3. քաղաքական կամ ոստիկանական օրէնք՝ սրա այլ և այլ պատիժներով։ Մարդիկը աւելում են, երկրորդ և երրորդ տեսակի օրէնքները մեզ համար այլևս նշանակութիւն չունեն, իսկ բարոյական օրէնքը մեզ էլ է վերաբերում։

Եթէ ընդունենք այս վարդապետութիւնը, սրա անխուսափելի հետեանքը այն է, որ շաբաթի պատուիրանքն էլ վերաբերում է մեզ և մենք պարտ ենք շաբաթը պահել։ Եթէ այդպէս է, ուրեմն շաբաթականները կատարեալ իրաւունք ունեն մեզանից պահանջելու որ շաբաթը պահենք։

Բայց այս վարդապետութիւնը ուղիղ չէ։ Օրէնքը անբաժանելի ամբողջութիւն է կազմում։ Ո՞վ է մարդկանց իրաւունք տուել բաժանել օրէնքը և ասել. Այս մասը նշանակութիւն ունի, իսկ միւս մասերը ոչ։ Այսպէս բան չկայ։ Օրէնքը ամբողջութիւն է կազմում։ Սրան ապացոյց օրինակ Յակոբոսի Բ, 10, 11. «Ով որ բոլոր օրէնքը պահէ և մէկումը մեղանչէ, ամեն օրէնքին եղաւ պարտական։ Որովհետև այն Շնութիւն մի անիր ասողը ասեց էլ. Մի սպանիր, իսկ եթէ շնութիւն չանես բայց սպանես, եղար օրինազանց»։

Միթէ սա պարզ չէ. «Ով որ բոլոր օրէնքը պահէ և մէկումը մեղանչէ, ամեն օրէնքին եղաւ պարտական»։ Որովհետև օրէնքը անբաժան է, նա ամբողջ է։

Նոյնպէս էլ ասվում է Գող. Ե, 3. «Վկայում եմ ամեն մի մարդի համար որ թլփատվում է, թէ նա պարտական է բոլոր օրէնքը կատարելու։ Խախտնուած էք Քրիստոսից դուք, որ օրէնքով էք կամենում արդարանալ, շնորհիցն ընկած էք»։ Յետոյ համար 13. «Որովհետև դուք ազատութեան համար էք կանչուել, եղբարք»։ Համար 16. «Հոգով զնացէք և մարմնի ցանկութիւնը չէք կատարել»։ Համար 18. «Բայց եթէ Հոգուց էք առաջնորդվում օրէնքի տակ չէք»։ Համար 22. «Բայց

Հոգու պտուղն է՝ սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, երկայնամտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հեղութիւն, ժողովարարութիւն»։ Համար 23.

«Այնպիսիների դէմ օրէնք չկայ»։ Ապա հւամ համար է տրուած օրէնքը։ 19 և 20 համարներում յիշված մարդկանց համար, մեղքերի մէջ ապրողների համար։ Իսկ օրէնք չկայ նրանց, որոնք Աստուծոյ հետ յարաբերութեան մէջ են մտել։ Աստուծոյ որդիներին բոլորովին չէ վերաբերում Մովսէսական օրէնքը, որը պարզ ցոյց է տալիս նոյնպէս Ա. Տիմ. Ա, 9 համարը։

Կարգալով Աստուածաշունչի այն գլուխները, ուր առաջ են բերվում օրէնքները, իսկոյն կարելի է տեսնել, որ զանազան բաժանմունքների պատուիրանները և կանոնները խառն առաջ են գալիս իրար ետևից, այնպէս որ բոլորովին չի կարելի նրանց մասերի բաժանել։ Իրար հետ խառն են բարոյական, ծիսական և ոստիկանական օրէնքները։ Օրէնքը երեք մասի բաժանողները բռնութիւն են գործի դնում Ս. Գրքի վրա։

Աստուծոյ որդիների համար նշանակութիւն չունի ոչ թէ Մովսէսական օրէնքի մի մասը միայն, այլ բոլորը օրէնքը, Հոգով. է, 4 ասվում է. «Բայց հիմա արձակուեցանք օրէնքիցը մեռնելով

նրան, որով որ բռնված էինք»։
Եւ որ այստեղ խնդիրը նոյնպէս
բարոյական օրէնքի՝ 10 պատու-
իրանքների մասին է, տեսնում
ենք հետեւեալ համարից. «Արդ ի՞նչ
ասենք. օրէնքը մեղք է. քաւ լի-
ցի. բայց ես մեղքը չէի գիտե-
նալ՝ եթէ ոչ օրէնքով. և ցան-
կութիւնը չէի ճանաչել՝ եթէ օ-
րէնքը չէր ասել. Մի ցանկանա՛ր»։
Իսկ մի ցանկանա՛րը 10-րդ պա-
տուիրանքն է. Ուրեմն բոլորովին
պարզ է, որ այստեղ խօսքը նոյն-
պէս 10 պատուիրանքների բարո-
յական օրէնքի մասին է։

Որ օրէնքի նշանակութիւնը յա-
ւիտենական չէ՝ պարզ երևում է
նոյնպէս Բ Կորնթ. Գ, 7-ից.
«Բայց եթէ մահի պաշտօնը գրով
քարերի վրա փորուած՝ փառքով
եղաւ, մինչև որ Իսրայէլի որդի-
քը չէին կարող Մովսէսի երեսին
մտիկ անել նրա երեսի փառքի
համար որ խափանուող էր, ո՞ր-
քան աւելի հոգու պաշտօնը փառ-
քով կլինի»։ Եւ յետոյ համար 11.
«Որովհետեւ եթէ այն խափանու-
ողը փառքով էր, ո՞րքան աւելի
փառքով է հաստատ մնացողը»։

Ուրեմն օրէնքի ուխտի մասին
ասվում է թէ նա խափանվող է,
թէ և գրված է քարի տախտակնե-
րի վրա։ Շաբաթականները ասում
են թէ բարոյական օրէնքը յաւի-
տենական է, և սրա համար էլ
քանդակվեցաւ քարի տախտակնե-
րի վրա, բայց այս Բ Կորնթ. Գ. գլու-

խը պնդում է սրա հակառակը։

Քարի տախտակների դիմաց
կանգնած են սրտի մարմնեղէն
տախտակները, ինչպէս տեսնում
ենք այդ նոյն գլխի 3 համարում.
«Քարի» է մարդի բնական սր-
տի դրութիւնը, քանի որ դեռ
Քրիստոս այնտեղ չի մտել և իր
իշխանութիւնը չի հաստատել։
Բայց ով որ յանձնվում է նրան,
նրա մարմնիցը վերցնում է նա
քարեղէն սիրտը և տալիս է նրան
մարմնեղէն սիրտ, որի մէջ գրում
է նա իր պատուիրանքները։ Սա
արդէն խոստացված է Եզեկիէլ
մարգարէի միջոցով (ԼԶ, 26)։

Ուրեմն այդ փաստը, թէ քարի
տախտակների վրա էին գրված
10 պատուիրանքները բոլորովին
ապացոյց է թէ սրանց յարտե-
ւութիւնը և նշանակութիւնը յա-
ւիտենական է, այլ սա միայն
քարեղէն սրտերի օրինակ է։

Որ Աստուծոյ որդիները այլևս
օրէնքի տակ չեն՝ սրան ապացոյց
է Մատթ. Ե, 17-ի խօսքը. «Մի կար-
ծէք թէ ես եկայ օրէնքը կամ մար-
գարէնքը քանդելու. ես չեկայ
քանդելու այլ կատարելու։ Որով-
հետեւ ճշմարիտն ասում եմ ձեզ,
մինչև որ երկինքն և երկիրս անց
կենան, օրէնքիցը մի կէտ կամ
մէկ պղտիկ նշանագիր չի անցնիլ,
մինչև որ բոլորը չկատարուի»։

Ի՞նչ է նշանակում. «Ես չեկայ
քանդելու այլ կատարելու»։ Մի
օրինակով պարզենք այդ. երկու-

սը նշանվում են. Մի՞թէ նրանք
նշանվել են որ միշտ նշանված
մնան։ Ոչ, նշանվել են որ յետոյ
ամուսնանան։ Երբ հարսանիքի
օրը գալիս է, մի՞թէ նշանադրու-
թիւնը քանդվում է։ Ոչ, այլ նը-
շանադրութիւնը կատարվում է.
կատարվում է այն, ինչ բանի
համար նրանք նշանվել էին։ Նշա-
նադրութեան ժամանակը մի ան-
ցողական միջոց էր։

Նոյնպէս էլ օրէնքը և Աւետա-
րանն է. երբ Յիսուս ասում է
թէ նա եկել է օրէնքը կատարե-
լու և ոչ թէ քանդելու, սա չէ
նշանակում թէ օրէնքը հիմա վե-
րացվում է և հիմա ամեն մէկը
կարող է իր ուզածն անել, այլ
հիմա օրէնքը բերվում է իր կա-
տարման՝ Յիսուսով և Յիսուսի
մէջ։ Օրէնքը անցողական էր. հի-
մա գալիս է այն, ինչ բանի հա-
մար որ նա տրուած էր։ «Ուրեմն
օրէնքը մեզ համար դաստիարակ
եղաւ դէպի Յիսուս Քրիստոսը, որ
հաւատքից արդարանաք»։ Գաղ.
Գ, 24։ Օրէնքը դաստիարակ էր,
անցողական մի միջոց էր։ Հիմա
ուրիշ բան է գալիս. օրէնքի տե-
ղը բռնում է Քրիստոսը։ Մինչև
նրա գալը օրէնքի տակ, իսկ յե-
տոյ՝ շնորհքի տակ։

Բազմաթիւ համարներից որոն-
ցում արտայայտված է այս միտ-
քը, ո՞ր մէկը առաջ բերենք։ Ի՞նչ
պատուէր էր որ Տէրը իր աշա-
կերտներին տուաւ. «Գնացէ՛ք և

Աւետարանը քարոզեցէ՛ք», ոչ թէ՝
Օրէնքը և Աւետարանը։ Նոյնպէս
էլ Դուկ. ԺԶ, 16. «Օրէնքը և
մարգարէները մինչև Յովհաննէսն
են. նրանից յետոյ Աստուծոյ թա-
գաւորութիւնն է աւետարանվում»։
Կամ թէ յիշենք Հռովմ. Ժ, 4.
«Օրէնքի վախճանը Քրիստոսն է
ամեն հաւատացողի համար դէպի
արդարութիւն»։

Ի՞նչ ասել է «օրէնքի վախճա-
նը»։ Պէտք չէ սխալ հասկանալ։
Սա չէ՝ նշանակում՝ օրէնքը վերա-
ցվել է, հիմա ամեն մարդ ինչ
ուզի կարող է անել, հիմա ոչ մի
բան արգելված չէ։ Քաւ լիցի։

Այս սա ի՞նչ է նշանակում։
Սա նշանակում է թէ Սինայի օ-
րէնքի փոխարէն հիմա Քրիստոսն
է, հիմա նա պիտի մեզ ասի թէ
ինչ պիտի անենք և ինչ պիտի
չանենք։ Մեր սրտի մէջ բնակ-
վող Քրիստոսն է ամեն ինչ կար-
գադրում՝ մեր անելիքը և չանե-
լիքը։ Մեզանում բնակվող Քրիս-
տոսն է հիմա մեր օրէնքը։ Օրէն-
քը պարտականութիւններ էր դը-
նում մարդու վրա, իսկ մարդը
պիտի ազնիւ կերպով խոստովա-
նէր և ասէր. «Ձեմ կարող կատա-
րել»։ Բայց երբ Յիսուսը մտնում
է մարդու սրտի մէջ, նա տալիս
է զօրութիւն և ուրախութիւն իր
կամքը կատարելու։

Մէկ աղջիկ իր հիւանդ մօր
անկողնի մօտ նստած ցերեկ և
գիշեր անդադար խնամում է նը-

րան: Եթէ մայրը հարցնէր. «Աղջիկս, ի՞նչու համար ես այդ անում», ի՞նչ կը պատասխանէր աղջիկը: Մի՞թէ նա կը պատասխանէր. «Ես սա անում եմ որ պահած լինիմ «Պատուիր քո հօրը և մօրը» պատուիրանը: Մի՞թէ սա ուրախութիւն կը պատճառէր մօրը: Երբէք: Եւ աղջիկն էլ այդպէս չի ստիլ: Այլ նա կասի. «Մայրիկ, ես սա անում եմ, որովհետեւ քեզ շատ եմ սիրում, ես չեմ կարող չանել»:

Այո, սէրն է օրէնքի կատարումը: Մենք պահում ենք օրէնքը ոչ թէ նրա համար որ վախնում ենք վերակացուի գաւազանից, այլ որովհետեւ Քրիստոսի սէրը մեզ այդպէս է ստիպում: Քրիստոս է մեր օրէնքը:

Կարծեմ հիմա հասկանալի է: Յիսուսի կամքն է մեր օրէնքը: Ամեն ինչ որ Նա մեզ ասում է՝ անում ենք: Եւ նրա պատուիրանքները ծանր չեն: Որովհետեւ ինչ որ մեզ ասում է, նոյնը Իր Հոգովը մեզ տալիս է:

Երբ մենք երգում ենք. «Ազատ օրէնքից, ի՞նչ երջանիկ կեանք», սրանով չենք ասում թէ մենք առանց օրէնքի ենք, այնպէս որ մեր ուզածի պէս կարող ենք ապրել, այլ սա նշանակում է. կապուած լինել Յիսուսին: Եւ Յիսուսը չի նայում մեղքին թեթեւաբանութեամբ: Երբ մարտիրոսանքով, ընդհակառակը շատ խիստ է նայում:

Սա մենք պարզ տեսնում ենք լեռան քարոզութիւնում. «Լսել էք, որ առաջիններին ասուեցաւ. «Մի սպանիր, և ով որ սպանէ, պարտական կլինի դատաստանին: Բայց ես ասում եմ ձեզ թէ ամեն ով որ բարկանայ իր եղբորը, պարտական կլինի դատաստանին...»:

Հիմա մեզ համար պարզվեց և այդ, որ օրէնքից ազատ լինելը նշանակում է Յիսուսին կապուած լինել, որ Նա որոշէ մեր անելիքը և կարգադրէ ամեն ինչ մեր կեանքում:

Քրիստոսումը կատարվել է ոչ թէ օրէնքի մէկ մասը միայն, այլ ամբողջ անբաժան օրէնքը: Օրինակ, գոհերը կատարվել են Քրիստոսում: Իսրայէլի գոհերը ուրիշ բան չէին քան թէ օրինակներ, որոնք մատնացոյց էին անում Յիսուս Քրիստոսի գոհի վրա, որով Նա կատարեց փրկութիւնը: Նոյնպէս էլ բոլոր միւս կանոնները և կարգադրութիւնները աօների և ուրիշ բաների վերաբերեալ՝ ամենն էլ Քրիստոսով կատարվեց: Ամենը օրինակներ էին, ցոյց էին տալիս Քրիստոսին: Ուրեմն «Քրիստոսը օրէնքի վախճանն է»:

Ուրեմն եթէ բոլոր օրէնքը կատարվել է Քրիստոսում, ապա շաբաթի պատուիրանքն էլ կատարվել է նրանում:

Ի՞նչ էր ուղում ասել Աստուած շաբաթի պատուիրանքով:

Նախ պէտք է իմանանք թէ ում էր տրված շաբաթի պատուիրանքը. շատ պարզ է և կասկած չկայ թէ սա տրուած էր Իսրայէլի որդիներին: Խնդրեմ բաց անես ելից ԼԱ գլուխը և կարդաս 12-17 համարները: Եւ յետոյ խնդրեմ մի մատիտ առնես և գիծ քաշես այն բառերի տակը որ ես այստեղ գիծ եմ քաշում:

12. Եւ Եհովան խօսեց Մովսէսի հետ և ասաց.

13. Եւ դու խօսիր Իսրայէլի որդիներին հետ ասելով. Անպատճառ իմ շաբաթները պահէք, որովհետեւ սա մի նշան է իմ և ձեր մէջտեղը ձեր ազգերի մէջ, որ գիտենաք, թէ ես եմ Եհովան ձեզ սուրբ անողը:

14. Ուրեմն շաբաթը պահեցէք, որովհետեւ նա ձեզ համար սուրբ է. ով որ նրան պղծէ անպատճառ պիտի մեղացնուի, որովհետեւ ամեն ով որ այն օրը մի գործ գործէ, այն անձը իր ժողովրդի մէջից կորչէ:

15. Վեց օր գործ գործուի, բայց հօթներորդ օրը՝ հանգստութեան շաբաթը սուրբ պիտի լինի Եհովայի համար. ով որ հանգստութեան օրը մի գործ գործէ, անպատճառ պիտի մեղացնուի:

16. Եւ Իսրայէլի որդիքը պիտի պահեն շաբաթը, որ շաբաթը իրանց ազգերի մէջ յաւիտենական ուխտ անեն:

17. Նա յաւիտենական նշան է իմ և Իսրայէլի որդիների մէջտեղը, որովհետեւ Եհովան վեց օրուայ մէջ ստեղծեց երկինքն և երկիրը, և հօթներորդ օրը դադարեց և հանգստացաւ:

Սրանից պարզ կարելի է տեսնել թէ ում է պատուիրված շաբաթը: «Նա յաւիտենական նշան է իմ և

Իսրայէլի որդիների մէջտեղը»: Բայց մենք եկել ենք հեթանոսներից: Եւ այնտեղ ոչ մի բան չենք գտնում շաբաթի մասին, ոչ առաջ՝ ազգերի մէջ, ոչ էլ յետոյ՝ եկեղեցու մէջ: Նահապետների օրով բոլոր ժամանակը չենք գտնում ոչ շաբաթի և ոչ էլ շաբաթ տօնելու նշոյն անգամ: Ոչ առաքելոց թղթերում և ոչ էլ առաջի եկեղեցու կանոններում:

Շաբաթը նշան է Աստուծոյ և Իսրայէլի որդիների մէջտեղը: Աստուած Ինքն է ասում այդ:

Բայց գրված է. «Յաւիտենական նշան»: Այս «յաւիտենական» խօսքի ճիշդ նշանակութիւնն է բնագրում. «Այս ժամանակի ընթացքը»: Կան ժամանակի դանազան շրջաններ, կամ Աստուծոյ տնտեսութիւններ, ինչպէս անուանել են այդ շրջանները: Քրիստոսից առաջ Աստուած գրաւորապէս պարտաւորվել է Իսրայէլ ժողովրդով: Գրաւոր տեղը բռնել են Իսրայէլի պատմութիւնը, նրա պատրաստվելը և դաստիարակվելը: Սա Իսրայէլի ժամանակն էր: Այսօր ապրում ենք մենք ուրիշ ժամանակում՝ եկեղեցու ժամանակում: Այսօր խնդիրը վերաբերում է եկեղեցու կատարմանը և պատրաստվելուն: Ուրեմն շաբաթի այս նշանը չի վերաբերում մեզ՝ եկեղեցուն, սա վերաբերում էր Իսրայէլի ժամանակին և տեւեց մինչև որ տեսնուի էր Իսրա-

յէլի ժամանակը:

Ի՞նչ էր կամենում շաբաթի միջոցով ասել Աստուած Իսրայէլի որդիներին: Այստեղ խնդիրը «նշանի» մասին էր: Աստուծոյ գիտաւորութիւնը չէր միայն հանգստեան օր տալ Իսրայէլի որդիներին: Եթէ այդ լինէր, այն ժամանակ այս պատուէրը կոտորողի համար Նա չէր դնել մահվան պատիժը: Առանց այդպիսի պատուիրանքի էլ աշխատութիւնից յետոյ մարդիկը մտածում են հանգստութեան մասին: Քնելու համար, գիշերվայ հանգստութեան համար ոչ մի պատուէր տրուած չէ: Ինքն իրան մեր մարմինը պահանջում է պէտք եղած հանգիստը:

Ոչ, բանը հանգստեան օրվայ մասին չէ, այլ նշանի մասին: Նշանը մատնացոյց է անում ինչ որ մի բանի, որ արտայայտված է այս նշանով, կամ ինչ բանի օրինակն է նա:

Ի՞նչ բան է սա:

Երբ բանանք Աստուածաշունչի առաջին թերթը և կարդանք վեց օրերի ստեղծագործութեան պատմութիւնը, միշտ կը հանդիպենք նոյն խօսքերին.

«Եւ իրիկուն և առաւօտ եղաւ առաջին օրը (համար 5)... երկրորդ օրը (հ. 8)... երրորդ օրը (հ. 13)... չորրորդ օրը (հ. 19)... հինգերորդ օրը (հ. 23)... վեցերորդ օրը (հ. 31):»

Եւ յետոյ ասում է.

1. Եւ կատարուեցան երկինքն ու երկիրը, և նրանց բոլոր զարդերը:

2. Եւ Աստուած կատարեց եօթներորդ օրուան իր գործըն որ արաւ. և եօթներորդ օրը հանգստացաւ իր բոլոր գործերիցը, որ արաւ:

3. Եւ Աստուած օրհնեց եօթներորդ օրը և սրբեց նրան, որովհետեւ նրանում հանգստացաւ իր բոլոր գործերիցը, որ Աստուած ստեղծեց և արաւ:

Ձեռք գտնում այն խօսքը որով վերջանում էր ամեն օրվայ գործը: Ի՞նչու հիմա էլ չի ասում. «Եւ իրիկուն և առաւօտ եղաւ եօթներորդ օրը»: Որովհետեւ եօթներորդ օրը ուրիշ օրերի պէս օր չէր: Որովհետեւ նա չէր վերջանում մի շաբաթ ժամերից յետոյ: Եօթներորդ օրը Աստուծոյ շաբաթի հանգիստն է, դրախտի շաբաթն է, ոչ մի մեղքով չխափանված և չպղտորված Աստուծոյ խաղաղութեան շաբաթը: Աստուծոյ շաբաթը խափանվեց մարդկանց համար մեղքի անկումով: «Եւ եղաւ... եօթներորդ օրը»: Վաղաժամ վերջացաւ խաղաղութիւնը:

Շաբաթը ետ է նայել տալիս մեզ և յիշեցնում դրախտում կորած և չքացած շաբաթի խաղաղութիւնը: Նա միշտ և անդադար յորդորում է մեզ ասելով. «Յիշիր թէ որտեղից վայր ընկար»:

Եւ շաբաթը ոչ միայն ետ է նայել տալիս անցեալին, որով նա կարող էր յուսահատութեան բերել մարդկանց, ըստ որում նրանք

պիտի ասէին. դրախտը կորել է, շաբաթը չքացել: Այլ շաբաթը ցոյց է տալիս նոյնպէս ապագան: Շաբաթը միշտ կրկնվող խոստում էր ապագայ ժամանակի համար, որում դարձեալ պիտի վերագտնար կորած դրախտը, նա ցոյց էր տալիս հանգստութեան և խաղաղութեան մի ժամանակ, որը երբէք չի վերջանալ:

Եւ դա ի՞նչ ժամանակ էր: Ո՞վ է վերադարձրել մարդկանց կորած դրախտը: Յիսուս: Մատթ. ԺԱ. զուլս վերջին համարներում կարդում ենք. «Ինձ մօտ եկէք ամեն վաստակածներ և բեռնաւորուածներ, և ես (բառացի) հանգստութեան կը բերեմ ձեզ: Ձեզ վրա առէք իմ լուծը և ինձանից սովորեցէք, որովհետեւ ես հեզ եմ և սրտով խոնարհ, և ձեր անձերի համար հանգստութիւն կը գտնեք»:

Յիսուսի մօտ եկողը գալիս է հանգստութեան: Յիսուս մեր շաբաթի հանգստութիւնն է, Նա մեր շաբաթն է:

Ո՞հ սարսափելի ծանր լուծ էր օրէնքի լուծը: Մարդիկը նրա տակ չարչարվել և տանջվել են չափազանց աշխատութիւնից: Եւ հիմա Յիսուսը կանչում է նրանց և ասում. Եկէք ինձ մօտ դուք ամենքդ որ վաստակել և բեռնաւորվել էք—Իմ լուծը քաղցր է—ինձ մօտ կը գտնեք այն հանգիստը, որը երբէք չէք գտնիլ օրէնքով: Իրաւ Յիսուսով մարդս հաս-

նում է հանգստութեան՝ լիովին և կատարելապէս:

Ուրեմն շաբաթը ցոյց է տալիս դէպի ետ՝ դրախտի հանգստին և ցոյց է տալիս դէպի առաջ Յիսուսում լինող հանգստին: Սա է այս «նշանի» նշանակութիւնը: Նա պիտի ասէր Իսրայէլ ժողովրդին. Թէև կորել է դրախտը և սրա հետ էլ մարդու որդիական յարաբերութիւնը Աստուծոյ հետ, —բայց դրախտը դարձեալ կգայ. Մեսիան կը տանի հանգստեան մէջ: Խեղճ տանջված մարդկանց Նա կը դարձնի Աստուծոյ որդիներ:

Ով որ եկել է Յիսուսի մօտ և նրանում եկել է հանգստեան, նա ոչ միայն ամբողջ շաբաթը մի հատ շաբաթ օր ունի, այլ նրա համար ամեն օրը շաբաթ է, նա հանգստանում է ամեն օր Աստուածանում:

Սիրելի ընթերցող, արդեօք դու արդէն բռնել ես այդ տեղը, այդ դիրքը: Որ շաբաթապահները այնքան շատ խօսում են մի առանձին օրի աօնելուց, որ նրանք իրանց և ուրիշների վրա դնում են մի օրէնք, որը Ս. Գիրքը չի դնում նրանց վրա, սա ապացոյց է որ նրանք տակաւին չեն հասել Տէրումը եղած այդ հանգստեան, որ նրանք տակաւին չեն գտել ճշմարիտ շաբաթը:

Եւ դու տակաւին չը գիտես այդ հանգիստը, լսիր քեզ ասեմ.

«Հանգիստ Փրկչի ձեռքերում,
Հանգիստ կուրծքին վերայ,
Իւր սիրոյ հովանեաց տակ
Հոգիդ կհանգստանայ»:

Հիմա կարող ենք նոյնպէս հասկանալ թէ ինչու շաբաթի պատուիրանքը կոտորողը սաստիկ պիտի պատժվէր. սա էլ «նշան» էր: Աստուած կամենում էր տպաւորել Իսրայէլի որդիներին սրտեւրում հետեւեալ կարեւոր ճշմարտութիւնը. «Որոնք որ օրէնքի գործերից են, անէծքի տակ են»: Գաղ. Գ, 10: Կրօնական բաներում մեր ամեն ջանքն ու աշխատանքը ոչ միայն աննպատակ ու անարժէք են, այլ դա դարձութիւն է Աստուծոյ առջև: Սա է այն մեծ ճշմարտութիւնը, որը մեզ համար պարզվում է շաբաթի վերաբերեալ պատուէրներից: Օգուտ չունի մեր ամեն ճիգն ու աշխատանքը. բանը մնում է Աստուծոյ շնորհքին և ողորմութեանը, որ մենք պարզ կերպով ապաւինութեամբ յանձնվենք Նրան և հանգչենք Նրա սիրոյ մէջ: Այս դիրքը պիտի բռնենք՝ Աստուծոյ հետ ունեցած մեր յարաբերութեան մէջ: Կարող չէ Աստուծոյ առաջ կանգնել այն ամենը, ինչ որ մարդն է անում, այն ամենը, ինչ որ մարդի հոգի վրա է բուսնում:

«Այլևս ունայն ընծաներ մի բերէք, ձեր խոնկը ինձ համար պիղծ է, ամսագլուխներին ու շաբաթներին և ժողովներ գումարվելուն չեմ տանիլ»:

անօրէնութիւն և տօնախմբութիւն: Զեր ամսագլուխներից և տօներից զգուշ ե հոգիս, նրանք ինձ վրա բեռ են, յոգնել եմ տանելուց»: Նստալիա Ա, 13-14:

Յիսուսումն է հանգիստը: Նա է մեր շաբաթը: Ով որ դեռևս կարծում է իր սեփական ջանքերով, սեփական բարեպաշտութիւնով ձեռ կը բերէ իր փրկութիւնը «նա անէծքի տակ է»: Հանգստեան մէջ մենք պիտի մանենք և իրաւունք ունենք մտնելու, այն հանգստեան մէջ որ Աստուծոյ ժողովրդի համար կայ՝ հիմա, այսօր, այդ ժամանակում: Այն ժամանակ, չնայած և աշխարհքի անհանգստութեան՝ մենք կը մնանք խորին հանգստութեան մէջ:

Որ սա է Ս. Գրքի համեմատ շաբաթի նշանակութեան ուղիղ բացատրութիւնը, սրա համար կը բերենք միայն մի ապացոյց Յիսուսի կեանքից: Նրա օրերում շատ ճշգրիտ կերպով ուշադրութիւն էր դարձնվում օրէնքը պահելու վրա, նոյնպէս էլ շաբաթի պատուիրանքի վրա: Դէպի սրան ինչ դիրք բռնեց Յիսուսը: Նա լաւ գիտէր Աստուծոյ խորհուրդները: Նա գիտէր թէ Աստուծոյ ծրագրով ինչ պիտի լինէր շաբաթը: Արդեօք Յիսուսն էլ մեր այս օրվայ շաբաթապահների պէս պաշտպանում էր շաբաթի տօները օրինական մտքով: Ոչ, ինչպէս որ շաբաթը այն ժամանակ տօնվում էր, և ինչպէս շաբաթա-

պահները այսօր կրկին կամենում են մտցնել, Յիսուսը այնպէս չէր պահում, Նա կոտորում էր շաբաթը: Այո, Նա շաբաթի պատուիրանքը միշտ կոտորում էր:

Նա յաճախ բժշկութիւններ էր անում շաբաթ օրը և դրանով շատ զայրացնում փարիսեցիներին և դպիրներին: Եւ նրանք միշտ էլ յանդիմանում էին թէ Նրա արածը ուղիղ չէր: Բայց Նա էլի անում էր:

Ամենից ուշադրաւն է Յովհաննու Ե. զլսի պատմութիւնը. Բեթհեզդայի աւազանի մօտ պառկած հիւանդի բժշկութիւնը: Յիսուսը նրան, երբ բժշկում էր ասեց. «Վեր կաց, մահիճդ առ և ման եկ»: «Եւ մարդն իսկոյն ողջացաւ, և վեր առաւ իր մահիճը և ման էր գալիս, և օրը շաբաթ էր»: Այս պատճառով էլ մարդիկը զայրաւորվեցին: «Հրէաներն էլ ասեցին բժշկութեան. Շաբաթ է, արժան չէ քեզ, որ մահիճդ վեր առնես»:

Իրանց տեսակէտից նրանք իրաւունք ունէին: Ներք. Ժէ, 21 հ. գրված է. «Այսպէս է ասում Տէրը. Զգուշացէք ձեր անձերի համար, և բեռ մի վեր առնէք շաբաթ օրը և մի բերէք Ներուսողէմի դռներիցը ներս»:

Միթէ սա չգիտէր Յիսուսը: Իհարկէ գիտէր: Սակայն և այնպէս Նա հրամայում է հիւանդին այդ պատուէրը կոտորել և Նա ին-

քն էլ կոտորում է: Ի՞նչու է կոտորում:

Մարդիկ պատճառ են բերում թէ շաբաթ օրը կարելի է գործել սիրոյ գործեր և այնպիսի գործեր որ նեղութիւնը ստիպում է: Բայց սա էլ մարդկանց հնարած բացատրութիւն է: Լաւ, թող այդպէս լինի. իրաւունք կայ գործելու նեղութեան և սիրոյ գործեր: Յիսուսը հիւանդին շաբաթ օրը բժշկեց, սա կարող ենք իբրեւ սիրոյ գործ անուանել և արդարացնել: Իսկ ի՞նչ ասենք մահիճը վեր առնելու մասին: Սա սիրոյ գործ չէր: Ոչ, կ'առնէ մեզ, սա նեղութիւնն էր ստիպում: Ի՞նչպէս: Ես չեմ կարող սրա հետ համաձայնել:

Մարդը ՅՅ տարի հիւանդ պառկել էր այնտեղ, կարող էր մի գիշեր էլ մնալ և հետեւեալ օրը մահիճը վեր առնել և գնալ իր տունը, եթէ այնքան երկար ժամանակից յետոյ դեռ տուն էլ ունէր: Եւ եթէ անպատճառ շտապում էր հեռանալ այն տառապանքի սրահներից, կարող էր իր մահիճը թողնել այնտեղ: Նա կարող էր միւս օրը տանել, կամ թէ կարող էր հէնց թողնել որ մնա այնտեղ՝ այդ ցաւերի անկողինը: Շատ էլ լաւ բան եղած չի լինիլ այն մահիճը: Իսկապէս չի կարելի ասել որ նեղութիւնը ստիպում էր նրան վեր առնել մահիճը:

Ոչ, չկար այստեղ այնպէս նե-

դուրիւն, որը ստիպէր կոտրել շաբաթի պատուիրանքը. և մարդը իսկապէս կոտրեց և այն էլ Տէր Յիսուսի հրամանով:

Եթէ ստիպողական պէտք չկար, ինչու համար Յիսուսը այս հրամանը տվաւ նրան: Ի՞նչու չասեց նրան. «Լաւ է գայթակղութիւն չտաս, լաւ է մահիճդ այսօր այստեղ թողնես»: Տէր Յիսուսը միշտ լիքն էր սիրով և քաղցրութիւնով: Նա դիտմամբ տվաւ այս հրամանը, որպէս զի ցոյց տար, որ Նա Տէր է նոյնպէս և շաբաթի վրա: Նա կամենում էր ասել. Դուք շաբաթի պատուէրը բոլորովին սխալ էք հասկացել. ձեր բոլոր շաբաթ տօները ոչ մի նշանակութիւն չունի Աստուծոյ առջև: Այնպէս որ դուք էք ըմբռնում շաբաթը, երբէք Աստուծոյ միտքը այն չի եղել: Եւ այս պատճառով նա շաբաթը կոտրում էր նրանց աչքերի առաջ:

Որ կողմ որ ուզում էք դարձրէք, բայց և այնպէս Յիսուսը օրինական շաբաթը կոտրել է: Որովհետև շաբաթը կատարվել էր: Հիմա սկսվել էր ճշմարիտ շաբաթը: Օրինակը հիմա պիտի չքանար, որովհետև բուն Առարկան յայտնվել էր ասպարէզում:

Այնուհետև Յիսուս Քրիստոսի եկեղեցում այլևս խօսք չեղաւ շաբաթի պատուիրանքի և շաբաթը տօնելու վերաբերմամբ:

Յիշվում են մի քանի հարկաւոր

բաներ որ պէտք է ուշադրութեան առնէին հեթանոս քրիստոնեաները (Գործք առ. ԺԵ. գլ.), և շաբաթը չէ յիշվում: Իսկ եթէ ճիշդ է շաբաթապահների գաղափարը, անշուշտ շաբաթը պիտի յիշվէր:

Իսկ ի՞նչ ենք գտնում տոնքեալների թղթերում: Եթէ Յիսուս Քրիստոսի եկեղեցին պարտաւոր լինէր շաբաթը տօնելու, անշուշտ թղթերի մէջ շատ անգամներ կը յիշվէր այդ: Եւ բազմաթիւ համարներ կունենայինք շաբաթի մասին: Իհարկէ շաբաթապահները ասում են սրա դիմաց, թէ շաբաթի տօնելը արդէն այնպէս ինքն ըստ ինքեան հասկանալի է եղել, որ բոլորովին պէտք չկար այդ մասին խօսելու: Բայց որ սա ճիշդ չէ, շատ պարզ է:

Թղթերի մեծ մասը ուղղված է հեթանոս քրիստոնեաներին: Նրանց համար շաբաթի տօնելը ինքն ըստ ինքեան հասկանալի չէր: Եւ—եթէ իսկապէս շաբաթը տօնած լինէին, սրանով իսկոյն տարածայնութիւն ծագած կլինէր նրանց և նրանց տէրերի կամ իշխանաւորների միջև: Նրանք մեծ մասամբ կախում ունէին ուրիշներից կամ ծառայութեան մէջ էին: Այդ դէպքում թղթերի մէջ կը գտնէինք շատ յորդորներ և քաջալերութիւններ, որպէս զի նրանք չը շփոթվեն եթէ շաբաթը տօնելու պատճառով պատժի են-

թարկվեն: Թէ սա Աստուածանից է պատուիրված և սա յաւիտենական և անփոփոխելի օրէնք է:

Բայց մի խօսք անգամ չենք գտնում այդ մասին: Ի՞նչ է նշանակում այդ կատարեալ լռութիւնը: Միթէ սա անհերքելի ապացոյց չէ:

Եւ եթէ շաբաթի մասին էլ խօսք կայ թղթերի մէջ, միայն այն մտքով է որը շատ դէմ է շաբաթապահների փափագներին: Պօղոսը գրում է Հռովմ. ԺԴ, 5 համարում. «Մէկը օրն օրից աւելի է համարում, իսկ միւսն ամեն օր մէկ է համարում»: Այսինքն հրէայ քրիստոնեաները ուշադրութեան առնում են իրանց շաբաթը, իսկ հեթանոս քրիստոնեաները չեն տօնում նրան: Եւ Կող. Բ, 16, 17. «Սրդ թող մէկը չգատէ ձեզ ուտելու կամ խմելու համար, կամ տօնի կամ ամսագլխի կամ շաբաթների մասին, որոնք նոր գալու բաների ստուերներն են, բայց մարմինը Քրիստոսին է»:

Միթէ շատ պարզ չէ. բնաւ չի կարելի սա սխալ հասկանալ: Այն ամեն բաները որ Պօղոսը մէկ մէկ յիշում է. տօները, ամսագլուխները, շաբաթները՝ ամենը նոր գալու բաների ստուերներն են: Սրանք միայն մատնացոյց էին աւում, օրինակներ էին: Հիմա եկել է Քրիստոսը, բուն Առարկան, հիմա օրինակները այլևս նշանա-

կութիւն չունեն: Այդ բաների և օրերի ճշմարիտ էութիւնը Քրիստոսում է: Քրիստոսին ունեցողը Նրա հետ ունի նոյնպէս այդ նշանների և օրինակների կատարումը: Սրա համար էլ գրում է նա. Թող ոչ ոք անհանգիստ չանէ ձեր խղճմանքը այդ բաների վերաբերմամբ, իբրեւ այդ նշանները որ չունէք, այդ օրերը որ չէք պահում, ձեզ մի բան պակաս է: Ոչ, դուք ունէք այդ նշանների կատարումը Քրիստոսում:

Ես կարծում եմ թէ սրանով պարզվեց շաբաթի նշանակութիւնը: Աստուծոյ խորհրդով սա բոլորովին ուրիշ բան պիտի լինէր, քան թէ մարդիկն են շինել այդ:

Հին ուխտի մէջ շատ զարմանալի բաներով Աստուած մեզ իբր օրինակներով դաս է տալիս. ամեն օր մատուցվող զոհերը, տօները, քահանաների զգեստները, տապանակ ու թոփն և այլն, և մէկն էլ շաբաթն է: Այս ամեն բաները. օրերը, կանոնները, կարգադրութիւնները նշաններ են, որոնց առանձին նշանակութիւնն այն է, որ սրանք արտայայտում և մեզ համար ներկայացնում են միակ մեծ և կարեւոր ճշմարտութիւնը:

Երբ Աստուած կարգադրում էր թէ ինչ գոյնի պիտի լինէին քահանաների զգեստները, Նա հոգ չունէր այնքան բուն զգեստների համար, որքան այն ճշմարտութիւնների և խորհուրդների հա-

մար, որոնք նրանցով իբր օրինակներով պիտի արտայայտվեն։ Այս ամեն բաները ցոյց էին տալիս եկող Տիրոջ և Նրա մեծ ու փառաւոր փրկութեան գործի վրա։

Եւ այդպէս էլ շաբաթը, նալով հանգստեան օր չէ։ Նա ներկայացնում էր Տիրոջը, և օրինակն էր Նրա, որի մէջ է մեր հանգիստը և խաղաղութիւնը։

Սրա համար էլ պիտի ասեմ, թէ շաբաթապահների շաբաթի գաղափարը փոքրացնում է Աստուծուն, ցած է իջեցնում Նրան, Նրան դարձնում է իբր թէ չնչին բաների առևտրական, մինչդեռ Նա շաբաթի միջոցով կամենում էր տալ և տուել է մեր հոգու ճշմարիտ շաբաթի (հանգստութեան) մարգարէական վեհ պատկերը և օրինակը։

Ուրեմն քանի որ շաբաթը այդ նշանակութիւնն ունէր, պարզ է, որ Նա, իբր մէկ օր իր յայտնի կանոններով, մեզ համար այլևս ոչ մի նշանակութիւն չունի։ Քրիստոսում ստացել է նա իր ճշմարիտ իսկական նշանակութիւնը՝ իր կատարումը։ Քրիստոս կատարել է շաբաթը, Քրիստոս էլ դառել է շաբաթի կատարումը, ինչպէս և նա դառել է հին ուխտի զոհերի կատարումը։ Բուն առարկայի գալով՝ օրինակը կորցրել է իր նշանակութիւնն և արժէքը։ Իբր առանձին կանոններով

սահմանված մէկ օր՝ մենք այլևս ոչ մի գործ չունենք շաբաթի հետ։ Սա պէտք է պարզ գիտենանք։

Եթէ մենք Քրիստոսում ենք, եթէ Նրանում գտել ենք մեր հանգիստը, այն ժամանակ մեզ համար շաբաթը կատարել է իր նպատակը։ Ուրեմն մենք ապրում ենք Աստուծոյ հետ միութեան՝ յաւիտենական շաբաթում, ուրեմն ամեն անհանգստութիւնների մէջ էլ մենք ունենք հանգիստ, ունենք երկիրքը երկրիս վրա։ Եւ կարող ենք ճշմարտապէս ասել. ես կրկին գտել եմ զրախտը...

Ի՞նչ է ապա կիրակին։ Կիրակին բոլորովին գործ չունի շաբաթի հետ։ Մեծ և ահագին սխալ է, երբ մարդիկ սասում են, թէ հին ուխտի շաբաթը նոր ուխտի կիրակին է։ Սա ճիշդ չէ։ Այդ սխալը եկեղեցին արած լինելով, շաբաթապահներն էլ պնդում են, թէ եկեղեցին օրէնքը փոխել է, ուստի մեր աչքի առաջ պարզ ունենանք հետևեալ կէտը. կիրակին բոլորովին ուրիշ բան է, շաբաթը ուրիշ։

Շատերը բանը շատ հեշտացնում են։ Ասում են թէ միևնոյն է զոր օրը տօնել, միայն թէ եօթից մէկը տօնենք։ Միևնոյն է թէ որ տեղից կը սկսենք հաշել, մի յայտնի մտքով կիրակին էլ եօթներորդ օրն է։

Ոչ, կիրակին առաջին օրն է։

Շաբաթը եօթներորդ օրն է։ Մենք չենք տօնում եօթներորդ օրը, այլ տօնում ենք առաջին օրը։

Բայց ի՞նչու համար ենք առաջին օրը տօնում։

Շաբաթի առաջին օրը Յիսուսի յարութեան օրն է։ Մատթ. ԻԸ, 1. «Եւ շաբաթ իրիկունն որ միաշաբաթ էր լուսանում, Մարիամ Մագդաղենացին եկաւ և միւս Մարիամը գերեզմանը տեսնելու»։ Եւ Յովհ. Ի, 1. «Եւ միաշաբաթի օրը Մարիամ Մագդաղենացին առաւօտանց տակաւին մութ գալիս է գերեզմանը»։

Կիրակին առաջին օրն է, սա պիտի նկատի առնենք։ Եւ կիրակին յարութեան օրն է։

Եւ ի՞նչ եղաւ. «Նոյն օրը, միաշաբաթի իրիկունը, երբ որ զրոները փակուած էին, այնտեղ ուր որ աշակերտները ժողովուած էին, հրէաների վախիցը, Յիսուսը եկաւ և նրանց մէջ կանգնեց և նրանց ասեց. Խաղաղութիւն ձեզ»։

Առաջին ժողովը որում յարութիւն առած Փրկիչը յայտնվեց իր աշակերտների մէջ, կիրակի օր էր՝ գատիկ կիրակին։

«Եւ ութ օրից յետոյ» Յիսուսը դարձեալ եկաւ իրանների մօտ, որպէսզի խեղճ Թովմասին էլ յայտնվէր։ Դարձեալ կիրակի օր էր։

Եւ այն օրը, որում առաջին եկեղեցին Հոգով և կրակով մըկրովեց, գատիկից յետոյ յիսուններորդ օրը, դարձեալ կիրակի էր։

Պէտեկոստէի օրը. իսկապէս եկեղեցու ծննդեան օրն էր և սա կիրակի էր։ Յիսուս Քրիստոսի եկեղեցին կիրակիի գաւակ է։


Առաջին օրը՝ նոր սկզբի, նոր ստեղծագործութեան նշանն է։ Եկեղեցին նոր ստեղծագործութիւն է, և նրա ամեն մի անգամը նոյնպէս նոր ստեղծութիւն է։ Եթէ մէկը Քրիստոսում է, նա նոր ստեղծված է, հինը անցաւ, ահա ամեն բան նոր եղաւ։

Սրա համար էլ եկեղեցին կատարեալ իրաւունքով կիրակին դարձրել է իր տօնը։ Սա սահմանված չէ որևէ մի կայսրի կամ պապի քէֆով, այլ սա Աստուծոյ կամքն է, որ բոլորովին մի նոր բան, այսինքն՝ եկեղեցին գոյութեան բերաւ։ Նա չի լցրեց նոր զինին հրէական կարգադրութիւնների հին տկերի մէջ. այլ նոր գինիի համար նոր ձևեր էլ ստեղծեց։

Եւ արդէն առաքելոց օրերում սովորութիւն կար ժողովուելու առաջին օրը հաց կտրելու համար, ինչպէս որ սկզբում էլ տեսանք (Գործք. Ի, 7) և մինչև այսօր էլ նա մնացել է եկեղեցիի օրը։

Ուրեմն մենք կատարեալ Աստուծային բերիական իրաւունք ունենք տօնելու կիրակին և ոչ թէ շաբաթը։ Որովհետև մենք պատկանում ենք Յիսուս Քրիստոսի եկեղեցուն։

Եթէ զգուշանանք հին պատմութիւնը, շաբաթի կանոնները կիրա-



կիւր վրա դնելուց: Այդ երկու օրերը ոչ մի գործ չունեն իրար հետ: Կիրակին շաբաթ չէ: Ուրեմն այն կանոնները թէ ինչ կարելի է անել և ինչ չի կարելի, որոնք վերաբերում են հին ուխտի շաբաթին, գործ չունեն կիրակիի հետ: Նրանց նպատակը բոլորովին ուրիշ է եղել և արդէն կատարվել է:

Ապա ի՞նչ անել հիմա, կիրակին գործել, կը հարցնես դու: Ոչ, չը պէտք է գործել: «Սիրոյ թագաւորական օրէնքը» պահանջում է, որ թոյլ տանք մի օր ուրիշներն էլ հանգստանան՝ ծառայողները, գործակատարները, բանւորները, պաշտօնեաները և այլն, որ նրանք էլ կարողանան մէկ օր հանգիստ վայելել: Սիրոյ դէմ է և անողորմ բան է՝ այս օրը նրանց ձեռքից խլելը: Բայց մենք այլևս շաբաթի պատուիրանքի տակ չենք: Շաբաթի պատուիրանքը կատարվել է:

Եթէ մէկը շաբաթի հին ուխտի կանոնները ուզենայ կիրակիի վրա դնել, գոնեա պէտք է նա անաչառ լինի և ամեն կանոններին հետևի: Շաբաթականներն էլ չեն կամենում ամենին հետևել: Վերջնում են ինչ որ իրենց յարմար է, իսկ ինչ որ յարմար չէ, թողնում են. օրինակ, այս պատուէրը. «Շաբաթ օրը ձեր բոլոր բնակարաններումը կրակ չվառէք» (Ելից ԼԵ, 3), սա յարմար չի գալիս, թողնում են:

Կամ պէտք է ամբողջովին լինի, կամ բոլորովին չլինի: Եթէ մէկը կամենում է շաբաթի պատուիրանքը պահել, պէտք է բոլորը պահի: Եւ եթէ մէկը կամենում է օրէնքի այս մէկ կտորը պահել, պէտք է բոլոր օրէնքը պահի, պէտք է և թլփատվի և ինչ որ գրված է, ամենը պահի: Սա պարզ բան է և հասկանալի: Բայց շաբաթականոնները չեն ուզում հասկանալ: Նրանց վարդապետութիւնը Սատուածային և բիբլիական չէ, այլ մարդկային և ինքնահնար: Սրա համար էլ մենք զգուշացնում ենք և բացատրում ենք իրողութիւնը Աստուծոյ որդիներին համար, որ մի գուցէ նրանք էլ անտեղեակ լինելով Ս. Գրքի խորհուրդներին բռնվեն այդ մոլորութիւնից:

Կրկնում եմ ինչ որ կամենում էի ապացուցանել, և ինչ որ պարզ է Ս. Գրքի համեմատ:

Օրէնքը անցողական նպատակ ունէր: Սա դաստիարակ էր դէպի Քրիստոս տանող: Քրիստոսում կատարվել է օրէնքը: Ուրեմն Աստուծոյ որդիները այլևս օրէնքի տակ չեն, այլ շնորհի իշխանութեան և առաջնորդութեան տակ, իրանցում բնակվող Քրիստոսի առաջնորդութեան և կառավարութեան տակ:

Ինչպէս բոլոր օրէնքը հասել է իր կատարման, նոյնպէս էլ շաբաթի պատուէրը: Շաբաթը յիշե-


ցնում էր դէպի ետ՝ դրախտի կորցրած հանգիստը և ցոյց տալիս այն հանգիստը, որ Յիսուս պիտի բերէր: Հիմա Յիսուս բերել է այդ հանգիստը, հիմա նա է եղել մեր շաբաթը, մեր հանգիստը, հիմա մենք ոչ թէ մէկ օր, այլ ամեն օրեր ապրում ենք Նրա խաղաղութեան այդ շաբաթում:

Կիրակին բոլորովին գործ չունի շաբաթի հետ: Շաբաթը նշան է Իսրայէլի համար, իսկ կիրակին եկեղեցու օրն է, և նոր ստեղծագործութեան հեղեցու օրն է, այն օրը, որում

Տէրը իբրեւ Կենդանի երևեցաւ, այն օրը, որում Տէրը Իր Հոգին հեղեց և Իր եկեղեցին հիմնեց:

Սրա համար տօնում ենք կիրակին, իբրեւ եկեղեցու օրը, իբրեւ միասին ժողովուելու օր, առանց վերագրելու սրան հին ուխտի շաբաթի կանոնները: Որովհետեւ շաբաթը և կիրակին երկու տարբեր բաներ են: Շաբաթը Իսրայէլի օրն է, կիրակին եկեղեցու օրն է, և նոր ստեղծագործութեան հեղեցու օրն է, այն օրը, որում

նշանն է:





H A P M
4-286

3931

ՀՀ Ազգային գրադարան



NL0029893

Арм.

4-286a